CYLAND MediaArtLab-ը ներկայացնում է
Միջազգային մեդիաարվեստի փառատոն
CYFEST: Midpoint
Երևան, Հայաստան

Այս տարի մենք ներկայացնում ենք Միջազգային մեդիաարվեստի փառատոնի հատուկ թողարկումը՝ CYFEST: Midpoint-ը՝ միջոցառումների շարք, որը վերաիմաստավորում է մեդիաարվեստի ծագումը և դրա արձագանքները մեր օրերում: Ֆիլմերի ցուցադրությունների, ձայնային ինստալյացիաների, ռոբոտային մեդիայի և կենդանի կատարումների միջոցով փառատոնը ձևավորում է գաղափարական ու գեղարվեստական շարունակականություն՝ սկսած կինոյի, հեռահաղորդակցության և էլեկտրոնային ձայնի վաղ փորձարկումներից մինչև մեր օրերի բիոարվեստի, արհեստական բանականության և ռոբոտատեխնիկայի նորարարական ուղղությունները: Փառատոնի հատկանշական իրադարձություններից են Սերգեյ Փարաջանովի վաղ շրջանի «Հակոբ Հովնաթանյան» ֆիլմի ցուցադրությունը, ազդանշանների փոխանցման տեխնոլոգիաներից ներշնչված ձայնային փորձարարությունները, ինչպես նաև ռոբոտային ինստալյացիաները, որոնք վերաիմաստավորում են մարդու և մեքենայի փոխազդեցությունը: CYFEST: Midpoint փառատոնը կանցնի 2025 թվականի հոկտեմբերի 17-ից 25-ը՝ Երևանի առաջատար մշակութային կենտրոններում:

Վիդեոցուցադրությունների ծրագիր՝ «Զգայական/Նյուանսներ»
Երևանի Կինոյի տուն
Հոկտեմբերի 17, ժամը 19:30

Ծրագիրը կմեկնարկի հոկտեմբերի 17-ին Երևանի Կինոյի տանը՝ հատուկ ցուցադրությամբ, որտեղ կներկայացվի Սերգեյ Փարաջանովի վաղ շրջանի աշխատանքը՝ «Հակոբ Հովնաթանյան» ֆիլմը: Ֆիլմը անմիջականորեն ազդում է տեսողական ընկալման վրա՝ իր գեղանկարչական հյուսվածքի և մթնոլորտի միջոցով, նախանշելով հեղինակի «ստատիկ կինոյի» էսթետիկան, որտեղ յուրաքանչյուր կադր հնչում է որպես գեղանկարչական պատկեր: Այս պատմական հիմքերի վրա ժամանակակից արվեստագետները շարունակում են ուսումնասիրել ընկալման սահմաններն ու հնարավորությունները: Մաթիլդա Ռեյնոն 3D տեխնոլոգիաների միջոցով բուսաբանությունը ներկայացնում է նոր տեսանկյունից՝ միավորելով գիտական հստակությունն ու թվային զգայունությունը:
Էմի Քարլը ներկայացնում է իր «Վերարտադրողական ռելիքվիար» բիոտեխնոլոգիական քանդակը, որտեղ ցողունային բջիջները աճում են գեներատիվ կառուցվածքի ներսում: Ալեսանդրո Զաննիերը «ARCA-DNA» նախագծում ԴՆԹ-ի հաջորդականությունները վերափոխում է ձայնային միջավայրերի՝ ստեղծելով ներգրավիչ փորձառություն, որը անդրադառնում է բնության վերացման և գոյատևման թեմաներին: Էթել Լիլյենֆելդի «EMI» աշխատանքը ուսումնասիրում է վիրտուալ մարմնի և թվային ինքնության ազդեցությունը մարդկային իրականության վրա՝ համադրելով կինոարվեստը, NFT-ն և նոր մեդիան: Լուի-Պոլ Կարոնը արհեստական բանականության կիրառմամբ անդրադառնում է էկոլոգիական ճգնաժամի հակասություններին՝ ներկայացնելով այն որպես բախում հրատապության և անգործության միջև: Իսկ Յուլիա Ծարկինան, մարմնային շարժման և կինոպերֆորմանսի միջոցով, ուսումնասիրում է ենթագիտակցական փորձառությունը՝ որոնելով ներդաշնակություն մարդու և բնության միջև:

Ձայնային ինստալյացիա. «Տեղեկատվության փոխանցման ֆենոմենն ու պարադոքսները»
Արվեստագետներ. ceph, Purpurniy Dyadya, Սերգեյ Կոմարով և Լիդիա Գրյազնովա, Նիկիտա Բուգաև, the concept horse
Վայր. Էկոէպիկենտրոն, Երևանի բուսաբանական այգի
Բացում. հոկտեմբերի 18, ժամը 18:00
Կենդանի կատարումներ. Նիկիտա Բուգաև, Purpurniy Dyadya
Ցուցադրություն. հոկտեմբերի 19 – նոյեմբերի 2

Ձայնային այս բազմալիք ինստալյացիան ներկայացնում է ժամանակակից արվեստագետների հինգ նոր ստեղծագործություն, որոնք ուսումնասիրում են ձայնի ձևավորման, էլեկտրոնային երաժշտության և ազդանշանների փոխանցման փոխհարաբերությունները: Նախագիծը ներշնչված է հեռախոսային և ռադիոհաղորդակցության պատմությունից, վաղ էլեկտրոնային երաժշտական ստուդիաներից և արխիվային նյութերից, այդ թվում՝ Էվան Դորբելի 1970-ականների հեռախոսային համակարգերի ձայնագրություններից, և անդրադառնում է այն փաստին, թե ինչպես տեխնիկական գյուտերը վերածվեցին նորարարական ձայնային փորձառությունների: Լսարանին առաջարկվում է վերապրել այն փորձարարական ու արկածախնդիր ոգին, որից ծնվել է 20-րդ դարի ձայնային և երաժշտական մշակույթը: Նախագիծը պատմում է, թե ինչպես տեխնիկական գյուտերը վերածվեցին նորարարական ձայնային փորձառությունների, իսկ բացման երեկոյին կանցկացվեն կենդանի կատարումներ Նիկիտա Բուգաևի և Purpurniy Dyadya-ի մասնակցությամբ:

«Ռոբոտը ցիկլում». ինտերակտիվ մեդիա ինստալյացիաներ
Ժամանակակից արվեստի ինստիտուտ (ICA Երևան)
Բացում՝ հոկտեմբերի 19, ժամը 19:00
Ցուցադրություն՝ հոկտեմբերի 19–25

Ցուցադրությունը ներկայացնում է երեք ռոբոտային մեդիա աշխատանք, որոնք վերաիմաստավորում են մարդու և մեքենայի փոխհարաբերությունները՝ բացահայտելով այն սահմանը, որտեղ ավարտվում է մարդկային մտադրությունը և սկսվում է մեքենայական ինքնագործունեությունը: Մենք հաճախ ենք հակված ռոբոտներին վերագրել զգացմունք, միտք ու բնավորություն. այդ կերպ նրանց մարդապատկերելով՝ միաժամանակ բացահայտում ենք և՛ մեր ցանկությունը կապ հաստատելու ոչ-մարդկայինի հետ, և՛ մեր պատկերացումները կյանքի, ստեղծագործության ու ինքնավարության մասին:

- «Երկխոսություն» (Էլենա Գուբանովա և Իվան Գովորկով, 2018 / CYLAND Workshop) խորհրդանշական հանդիպում է ստեղծողի և իր ստեղծագործության միջև: Աշխատանքի նախատիպը Միքելանջելոյի հանրահայտ որմնանկարներից մեկն է՝ «Աշխարհի ստեղծումը»: Ռոբոտային թևերը կատարում են մարդկային շարժումների հիշեցնող ժեստեր՝ ցույց տալով ապագայի պարադոքսը. մարդը ստեղծել է մեքենան, որը կրկնում է իր ստեղծողի հույզերն ու շարժումները՝ խախտելով հեղինակության և սուբյեկտիվության սահմանները:

- «Ուրիշ ռոբոտ» (Աննա Ֆրանտս, 2025 / CYLAND MediaArtLab) պատմում է Անատոլի անունով փոքրիկ մեխանիկական ձեռքի մասին, որը ձգտում է ստեղծագործել հատուկ նպատակ ունեցող մեքենաների աշխարհում: Այս խաղային, միաժամանակ փիլիսոփայական աշխատանքը վերածում է տեխնոլոգիական փոխազդեցությունը ստեղծագործական ազատության դաշտի:

- «Էմոցիոնալ գիտակից ռոբոտ» (Աննա Ֆրանտս, 2025 / Engineering City) վերափոխում է մարդկային դեմքի արտահայտությունները մեխանիկական շարժումների՝ բացահայտելով ընկալման ու տեխնոլոգիայի նուրբ հատումը և հաղորդակցության երկիմաստությունը:
- 2

Այս երեք աշխատանքները միասին ստեղծում են փորձառական միջավայր, որտեղ մարդն ու մեքենան հայացք են գցում միմյանց՝ արտացոլելով, ընդօրինակելով և միաժամանակ հակադրվելով: Այցելուները կարող են անմիջականորեն փոխազդել ռոբոտների հետ՝ դիտելով, թե ինչպես են նրանց շարժումները մի կողմից արձագանքում մարդկային ժեստերին, իսկ մյուս կողմից ձգտում անկախ գոյության՝ հիշեցնելով մեր վերահսկողության և ստեղծագործական պատասխանատվության սահմանների մասին:

Կենդանի կատարումներ. the concept horse և Յոշիո Մաչիդա
Առնո Բաբաջանյանի համերգասրահ
Հոկտեմբերի 25, ժամը 19:00

Բացման երեկոյին հանդես կգա Ավստրիայից «the concept horse» խումբը, որի ստեղծագործությունները կառուցված են ֆիզիկական ձայնային աղբյուրների վրա՝ հիմնված կրկնության, մանր փոփոխության, անալոգային սխալների, պատահականության և չկրկնվողության սկզբունքների վրա: Նրանց կմիանա ճապոնացի երաժիշտ Յոշիո Մաչիդան, ով հանդես կգա 1970-ականների լեգենդար EMS Synthi AKS սինթեզատորով՝ ստեղծելով ներգրավիչ ամբիենտ ձայնային միջավայր: Նրանց համագործակցությունը վերստին հնչեցնում է այն նորարարների ոգին, ովքեր երբևէ փոխակերպեցին էլեկտրական շղթաներն ու աղմուկը՝ ձևավորելով նոր երաժշտական լեզուներ:

Գործընկերային միջոցառում
Տուան Մու և Լու Վեյ. «Կալիգրաֆիայի էխոն»
Ժամանակակից արվեստի ինստիտուտ (ICA Երևան)
2025 թ. հոկտեմբերի 17 – նոյեմբերի 17

Թայվանցի արվեստագետներ Լու Վեյի և Տուան Մուի երկակի անհատական ցուցահանդեսը՝ «Կալիգրաֆիայի էխոն», ներկայացնում է գրության, մարմնի և թվային տեխնոլոգիաների փոխհարաբերության զարգացումն ու էվոլյուցիան: Թանաքային նկարչության ավանդույթից ներշնչված տեսանյութերի միջոցով ցուցահանդեսը անդրադառնում է այն հարցին, թե ինչպես են գիտակցությունը, սիմվոլիզմն ու ալգորիթմական գործընթացները ձևավորում հեղինակության և տեսողական արտահայտման ժամանակակից ձևերը:

CYFEST փառատոնը կազմակերպվում է CYLAND MediaArtLab-ի կողմից:

Ծրագրի գլխավոր հովանավորն է Frants հիմնադրամը: